ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1492-Ա «19» մարտի 2026թ.

«ԷՐԵԲՈՒՆԻ» ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ԱԶԱՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանի 18.03.2026 թվականի **№** Ն/16343-26 գրությունը, Սյունիքի զարգացման և ներդրման հիմնադրամի և Սյունիքի մարզպետարանի հետ համատեղ նախաձեռնվող Սյունիքի ուրարտական ժառանգության ուսումնասիրման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

1.«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Ազատյանին՝ ս.թ մարտի 20-ից ապրիլի 3-ը գործուղել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաք:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Ազատյանի բացակայության ընթացքում «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Էրեբունի» պատմահնագիտական

արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխտնօրեն Հովհաննես Մելոյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ